

«ՎԱՆԱԶՈՐԻ Զ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված

«Վանաձորի Զ. Թումանյանի անվան

պետական համալսարանի կենտրոնի

ռեկտորի 02.02.2022 թ. թիվ 122 ԱՄ հրամանի



ՎԱՆԱԶՈՐԻ Զ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 7, 27.01.2022 թ.

Վանաձոր

## 1. Ընդհանուր դրույթները

1.1. Սույն կանոնակարգը սահմանում է Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարանում (այսուհետև՝ համալսարան) գիտական խմբերի ձևավորման, գիտական խմբերի կողմից գիտահետազոտական նախագծերի իրականացման պայմանները:

## 1.2. Հիմնական հասկացություններ

**Գիտական խումբ՝** ՎՊՀ պրոֆեսորադասախոսական կազմից և/կամ ասպիրանտներից, և/կամ հայցորդներից, և/կամ ուսանողներից կազմված խումբ է, որը ղեկավարում է գիտությունների դոկտորի կամ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող աշխատողը, որը իրականացնում է հաստատված թեմայով հիմնարար կամ կիրառական գիտական աշխատանքներ:

**Գիտահետազոտական նախագիծ՝** մասնագիտական կամ միջմասնագիտական ուղղությամբ գիտահետազոտական աշխատանք:

Գիտահետազոտական ուղղվածությամբ պայմանավորված՝ գիտական խմբերը կարող են լինել ինչպես ամբիոնային, այնպես էլ միջամբիոնային:

Գիտահետազոտական նախագծի իրականացման ժամկետը մինչև 18 ամիս է:

Գիտական խմբերի ստեղծման նպատակներն են՝

- գիտահետազոտական աշխատանքների արդյունքների լիարժեք և արդյունավետ կիրառումը կրթական գործընթացում,
- արդյունավետ աջակցությունը գիտամանկավարժական կադրերի պատրաստմանը, և պրոֆեսորադասախոսական կազմի գիտական որակավորման բարձրացմանը,
- ասպիրանտների (հայցորդների) և ուսանողների ներգրավումը գիտահետազոտական աշխատանքներում,
- արտաքին մրցույթներին մասնակցելու համար Համալսարանի աշխատակիցների, ասպիրանտների (հայցորդների), ուսանողների կողմից ներկայացվող հայտերի նախապատրաստման փորձի կուտակումը,
- Web of Science և Scopus գիտատեղեկատվական շտեմարաններում ներառված գիտական պարբերականներում գիտական հոդվածների տպագրումը:



## 2. Գիտական խմբերի ղեկավարին և անդամներին ներկայացվող պահանջները

### 2.1. Գիտական խմբի կազմի մեջ կարող են մտնել՝

- համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները, որոնք հաստիքային աշխատողներ են,
- համալսարանի ասպիրանտները, հայցորդները և ուսանողները,
- խմբում պետք է ընդգրկվի մինչև 35 տարեկան առնվազն մեկ կատարող<sup>1</sup>:
- խմբի ղեկավարը վերջին 5 տարիների ընթացքում առաջարկվող գիտահետազոտական նախագծի ուղղությամբ պետք է ունենա առնվազն երկու գիտական հոդված (ՀՀ ԲՈԿ-ի ցանկում ներառված գիտական հանդեսում և/կամ միջազգային գրախոսվող ISSN ունեցող ամսագրերում),
- խմբի անդամները (ներառյալ ղեկավարը, բացառությամբ մինչև 35 տարեկան մասնակցի) պետք է ունենան առնվազն մեկ համատեղ գիտական հոդված ներկայացվող թեմայի ուղղությամբ, որը պետք է տպագրված լինի ՀՀ ԲՈԿ-ի ցանկում ներառված գիտական հանդեսում և/կամ միջազգային գրախոսվող ISSN ունեցող ամսագրերում,
- խմբի ղեկավարի և անդամների կողմից ներկայացվող հոդվածները չպետք է լինեն Բիալի ցանկերում (Beall's list, <https://beallist.net/>) ներառված կեղծ կամ «գիշատիչ» հրատարակչություններում, կամ պարբերականներում հրատարակված աշխատություն,
- ծրագրի իրականացման վերջնարդյունքում գիտական խումբը պետք է ունենա տպագրված առնվազն մեկ գիտական հոդված Web of Science և/կամ Scopus գիտատեղեկատվական շտեմարաններում ներառված գիտական պարբերականներում կամ դրական կարծիք՝ հոդվածի տպագրության երաշխավորելու մասին Web of Science և/կամ Scopus գիտատեղեկատվական շտեմարաններում ներառված գիտական պարբերականների խմբագրությունների կողմից: Հաշվետվության ներկայացման վերջնաժամկետը հնարավոր է երկարացնել մինչև 6 ամիս ժամկետով՝ գիտական խմբի ղեկավարի բացատրագրի հիման վրա՝ գիտական խորհրդի որոշմամբ:

<sup>1</sup>Նշված տարիքային շեմը կարող է ավելանալ՝

- Հայաստանի Հանրապետության և (կամ) Արցախի Հանրապետության զինված ուժերում ծառայած լինելու դեպքում հավելյալ 2 տարով,
- երեխայի խնամքի արձակուրդի դեպքում՝ յուրաքանչյուր երեխայի համար հավելյալ 1 տարով:



## 2.2. Գիտական ղեկավարն ապահովում է՝

- գիտական խմբի ձևավորումը,
- նախագծի բոլոր մասնակիցների աշխատանքների կազմակերպումը և վերահսկումը,
- տեխնիկական առաջադրանքի, օրացուցային պլանի, ընթացիկ և հաշվետվության փաստաթղթերի սահմանված ժամկետներում նախապատրաստումը և ներկայացումը՝ ըստ սահմանված պլանի,
- աշխատանքների կատարումը՝ ըստ աշխատանքային պլանի:

## 2.3. Գիտական խմբերի ձևավորումը՝

- գիտական խմբերը կարող են ձևավորվել ամբիոններում կամ ամբիոնների միջև: Հայտը ներկայացվում է ըստ 1,2,3,4 հավելվածների,
- գիտական խմբերի հայտերը քննարկվում են ամբիոնի նիստում և դրական եզրակացության դեպքում ամբիոնի նիստի քաղվածքով ներկայացվում են ռեկտորին ամեն տարի՝ հունվարի 5-ից մինչև մարտի 1-ը: Ամբիոնի կամ ամբիոնների կողմից բացասական կարծիքի դեպքում հայտը կարող է ուսումնասիրվել այլ գիտական հիմնարկում,
- գիտական խմբերի հայտերը ուսումնասիրվում են /մարտի 1-ից մինչև մարտի 13-ը/ ռեկտորի հրամանով ձևավորված հանձնաժողովի կողմից, որի կազմի մեջ են մտնում ռեկտորը, գիտական աշխատանքների գծով պրոռեկտորը, գիտահետազոտական աշխատանքների, նորարարությունների և համագործակցության բաժնի ղեկավարը, յուրաքանչյուր ֆակուլտետից մեկ անդամ և Ուսանողական գիտական ընկերության նախագահը: Հանձնաժողովի նիստերը բաց են,
- հանձնաժողովը ուսումնասիրում է ներկայացված նախագծերը (անհրաժեշտության դեպքում, հանձնաժողովի որոշմամբ, ներկայացված նախագծերը կարող են ուղարկվել արտաքին անսնուն գրախոսման) և գնահատում դրանք՝ ըստ սահմանված բանաձևի (հավելված 5),
- հայտերն ուսումնասիրելուց հետո բարձր միավորներ (Հավելված 5) ստացած նախագծերը քննարկման համար ներառվում են ՎՊՀ գիտական խորհրդի հերթական նիստի օրակարգում,



- գիտխորհրդի հաստատած գիտական խմբերի նախագծերը վավերացվում են Ռեկտորի հրամանով:

### 3. Գիտական խմբերի ֆինանսավորումը՝

- գիտական խմբերի ֆինանսավորումը կատարվում է ՎՊՀ բյուջեի գիտահետազոտական աշխատանքների խթանման ֆոնդից տարեկան առավելագույնը 500 հազար ՀՀ դրամ հումանիտար և հասարակական գիտությունների համար և առավելագույնը 650 հազար ՀՀ դրամ ֆիզմաթ և բնագիտական գիտությունների համար,
- ֆինանսավորումը կատարվում է ըստ ներկայացված հայտի և հանձնաժողովի որոշման,
- ֆինանսավորվում են Հավելված 3-ի կետ 2 և 3-ում նախատեսված ծախսերը,
- գիտահետազոտական խումբը յուրաքանչյուր 6 ամիսը մեկ անգամ ներկայացնում է հաշվետվություն գիտխորհրդին կատարած աշխատանքների մասին:
- անավարտ ծրագրերի կամ հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքը չկատարած խմբի անդամները զրկվում են ֆինանսավորումից և/կամ զրկվում են առաջիկա 2 տարում գիտական հայտերի մրցույթի մասնակցելու հնարավորությունից,
- խմբի՝ աշխատանքը չկատարած անդամները խմբի ղեկավարի զեկուցագրի հիման վրա կարող են փոխարինվել այլ անդամներով:
- Արտակարգ իրավիճակների դեպքում հնարավոր է ժամանակահատվածի փոփոխություն:

### 4. Եզրափակիչ դրույթներ

Կանոնակարգը ուժի մեջ է մտնում Ռեկտորի կողմից հաստատվելուց հետո:



Գիտահետազոտական թեմայի համառոտ բովանդակությունը

Գիտական նախագծի անվանումը	
Գիտական ոլորտը	
Հիմնարար կամ կիրառական գիտական հիմնական խնդիրը, որի լուծմանն ուղղված է նախագիծը	
Առաջարկվող մեթոդները և մոտեցումները	
Ակնկալվող գիտական արդյունքները	
Գիտության սույն բնագավառի հետազոտությունների ներկայիս վիճակը	
Նախագծի կատարման ժամկետը (մինչև 18 ամիս)	

Հավելված 2

Համառոտ տեղեկատվություն նախաձեռնող գիտական խմբի ղեկավարի և անդամների մասին

1.	Ազգանուն Անուն Հայրանուն	
2.	Ծննդյան օր/ամիս/տարի	
3.	Հեռախոսահամար	
4.	Էլեկտրոնային հասցե	
5.	Աշխատավայր (կազմակերպություն, հասցե, հեռախոսահամար, էլ. հասցե), զբաղեցրած պաշտոն	
6.	Ամբիոն	
7.	Կրթություն, որակավորում (կրթական որակավորում, ֆակուլտետ, բուհ)	
8.	Գիտական աստիճանը (առկայության դեպքում)	

Առաջարկվող նախագծի վերաբերյալ գիտական խմբի առկա գիտական հետազոտական աշխատանքները, նախկինում ստացված արդյունքներ, մշակված մեթոդներ և այլն (խմբի անդամներից յուրաքանչյուրը ներկայացնում է մինչև 5 գիտական աշխատանք՝ նախատեսված թեմայի ուղղությամբ):



1	Նախագծի իրականացման համար առկա տեխնիկական սարքերի, սարքավորումների և նյութերի ցուցակը <sup>2</sup>	
2	Ձեռք բերելիք տեխնիկական սարքերի, սարքավորումների և նյութերի ցուցակը նախագծի իրականացման համար (հիմնավորել) <sup>2</sup>	
3	Նախատեսված այլ ծախսեր նախագծի իրականացման համար (գործուղում, հողվածի թարգմանչական և հրատարակչական ծախսեր և այլն) (հիմնավորել)	

Գիտական խմբի ղեկավար(ներ)ի ստորագրություն(ներ)ը

\_\_\_\_\_

անուն,, ազգանուն, հայրանուն

\_\_\_\_\_

ստորագրություն

\_\_\_\_\_

ամիս, ամսաթիվ, տարի



<sup>2</sup>. Չընդգրկել համակարգչային տեխնիկա, գրասենյակային սարքավորումներ

Նախագծի կատարման գործողությունների պլան

Գիտական խմբի ղեկավար(ներ)ի ստորագրություն(ներ)ը

	Աշխատանքի (փուլի) անվանումը	Գործողություններ	Ժամկետներ	Պատասխանատու (ներ)	Ցուցիչ(ներ)	Հաշվետու պարտադիր փաստաթղթեր
1						
2						
3						

անուն, ազգանուն, հայրանուն

ստորագրություն



ամիս, ամսաթիվ, տարի



Գիտահետազոտական աշխատանք	Միավոր
Թեզիս (a)	0,5
Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածուի մեջ տպագրված հոդված (b)	1
Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածուի մեջ տպագրված հոդված(c)	1,5
ՀՀ ԲՈԿ-ի ցանկում և/կամ միջազգային գրախոսվող ISSN ունեցող ամսագրերում տպագրված հոդված (d)	2
Միջազգային գիտաժողով (WoS, Scopus) (c1)	2,5
Մենագրություն (e)	Մեկ մամուլը 0.5
Web of Science և Scopus գիտատեղեկատվական շտեմարաններում ներառված գիտական պարբերականներում գիտական հոդված (f1) (առանց Q)	3
Web of Science և Scopus գիտատեղեկատվական շտեմարաններում ներառված գիտական պարբերականներում գիտական հոդված (f2) (Q4)	3,5
Web of Science և Scopus գիտատեղեկատվական շտեմարաններում ներառված գիտական պարբերականներում գիտական հոդված (f3) (Q3)	4
Web of Science և Scopus գիտատեղեկատվական շտեմարաններում ներառված գիտական պարբերականներում գիտական հոդված (f4) (Q2)	4,5
Web of Science և Scopus գիտատեղեկատվական շտեմարաններում ներառված գիտական պարբերականներում գիտական հոդված (f5) (Q1)	5

$$ԳԳԱ = \frac{ax+bx+cx+dx+ex+f}{x}$$

y- խմբի անդամների թիվը

x-համահեղինակների թիվը

Հավասար միավորների դեպքում հանձնաժողովը առաջնահերթությունը որոշում է հետևյալ հերթականությամբ՝

1. բարձր ազդեցության գործակցով ամսագրերում տպագրված հոդվածներ,
2. նախագծի թեմայի ուղղությամբ համատեղ հոդվածների քանակ,



3. նախագծի թեմայի ուղղությամբ մինչև 35 տարեկան մասնակցի հետ համատեղ հոդված (ՀՀ ԲՈԿ-ի ցանկում ներառված գիտական հանդեսում և/կամ միջազգային գրախոսվող ISSN ունեցող ամսագրերում):
4. նախագծի թեմայի ուղղությամբ համատեղ հոդվածների քանակ վերջին 3 տարվա ընթացքում:

